



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 1 Ապրիլ. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ Չարշարանաց եւ Մտանելոյն ի Վիրապն: Ս. Պատարագը մատուցեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 2 Ապրիլ. 2. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան: Առաւօտեան, գլխաւորութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Նոր Երուսաղէմ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Ժամարարն էր Տ. Նղիշէ Վրդ. Ուշքունեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Հինգշաբթի, 6 Ապրիլ. Երեկոյեան ժամը 7-ին, ի Ս. Յակոբ, պաշտուեցաւ Մեծ Պահօց վերջին «Հանգստեան» ժամերգութիւնը:

Ուրբաթ, 7 Ապրիլ. Առաւօտեան, ի Ս. Յակոբ, պաշտուեցաւ Մեծ Պահօց «Արեւագալի», իսկ երեկոյեան՝ «Խաղաղական» վերջին ժամերգութիւնները:

Շաբաթ, 8 Ապրիլ. Յիշատակ Յարութեան Հազարու: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ապա մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ: Յետ Երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 9 Ապրիլ. Ծաղկազար: Առաւօտեան ժամը 6:15-ին, հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի, միաբան հայ-

րեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ, ապա Հայոց երկրորդ մուտքէն յետոյ նոյն տեղոյն մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղոյն շուրջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթեղեղեղ եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները:

Վանք վերադարձին, հայոց թաղի՝ ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնբասէք»-ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը:

«Դոնբասէք»-ի արարողութիւն կատարուեցաւ նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

Երկուշաբթի, 11 Ապրիլ. Աւագ Երեքշաբթի: Յիշատակ Տասն կուսանաց: Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Վազգէն Արք. Ալէքեան: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Նղիշէ Վրդ. Ուշքունեան:

Հինգշաբթի, 13 Ապրիլ. Աւագ Հինգշաբթի (Յիշատակ վերջին ընթերցաց): Առաւօտուն, Մայր

տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատուց Տ. Կորին Մ. Վրդ. Բաղդասարեան: «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիչ խորատնային լեզուով:

Գիշերուան ժամը 7-12, Մայր տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»: «Փառք ի բարձունս»-էն ետք տաճարին խորհրդաւոր մթնոթեան մէջ «Յայտնաւորքի ամպիրոնէն» քարոզեց Գանատայի Անթիլիասական թեմի առաջնորդ Տ. Բաբգէն Արք. Զարեան:

Ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի քո Քրիստոս»-ի խնկարկութիւնը:

Ուրբաթ, 14 Ապրիլ. Աւագ Ուրբաթ: Յիշատակ Զարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան:

Երեկոյեան Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը: Արարողութեանը Նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 15 Ապրիլ. Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Զատիկի): Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յարութեան տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թարգման Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի ձեռքէն:

Ժամը 11-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, սկստնեցաւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեացի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կրնքումէն: Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Մ. Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով

օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենագլխի ուխտաւորներուն: Ապա տեղի ունեցաւ եռագարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեաւ» շարականը: Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները:

Վանք դարձին, դարձեալ սկստնեցաւ նուագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան շուրջառագգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին թափօրին մէջտեղէն քալելով: Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան: Շարականներ երգելով եւ զանգահարութեամբ մուտք գործեցին Մայր տաճար:

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր տաճարի դասին մէջ կարգաց Ս. Զատիկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուց Տ. Աղան Աբղ. Գոգչեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Նախատօնակ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը: Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեաւ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն:

Ճրագալոյցի Ս. Պատարագներ մատուցուեցան նաեւ Ս. Յարութեան տաճարի մեր Վերնամաստան մէջ՝ պատարագեց Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան, եւ ի Ս. Հրեշտակապետաց՝ պատարագեց Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 16 Ապրիլ. Զատիկ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Կէս գիշերէն ետք ժամը 1:45-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեանի մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»:

Ապա միաբան հայրեր եւ ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռագարձ թափօրով Գերեզմանի եւ Պատանատեղոյն շուրջ: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան», իսկ Ս. Գերեզմանին առջեւ՝ «Խաչի քո Քրիստոս» բաժինի երգեցողութիւնը:

Առաւօտեան ժամը 7-ին Լուսարարապետ Սրբազան Հայրը միաբան հայրերու հետ մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, եւ կարճ դադարէ ետք Գանատայի Անթիլիասական թեմի առաջնորդ Տ. Բաբգէն Արք. Զարեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Վանք դարձին հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեալ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծահանդէս «Անդաստան»-ին:

Երկուշաբթի, 17 Ապրիլ. Բ. օր Ս. Զատկի: Յիշատակ մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, քարոզեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագի վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նաեւ միաբան հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ» ուխտաւորաց բարի ճանապարհ մաղթելու համար: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին նշխար բաժնեց:

Երեքշաբթի, 18 Ապրիլ. Գ. օր Ս. Զատկի: Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: Ս. Պատարագէն ետք հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Հինգշաբթի, 20 Ապրիլ. Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ տօնի հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 22 Ապրիլ. Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Կիրակի, 23 Ապրիլ. Նոր Կիրակէ (Կրկնագատիկ): Ըստ սովորութեան Մայր տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց լուսահան Տ. Ասպետ Մ. Վրդ. Պալեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Երկուշաբթի, 24 Ապրիլ. Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւնը թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեց դէպի Ապրիլեան զոհերու յուշարձան, ուր տեղի ունեցաւ Կարգ Բարեխօսութեան կարգ:

Շաբաթ, 29 Ապրիլ. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը, մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 30 Ապրիլ. Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ): Առաւօտեան ժամը 6:15-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Հանդիսապետն էր Տ. Կորին Մ. Վրդ. Բաղդասարեան: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Հայոց երկրորդ մուտքէն ետք Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Խաղ Մ. Վրդ. Ճունտուրեան: Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ Հայր Սուրբը նախագահեց Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 6 Մայիս. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 7 Մայիս. (Կարմիր Կիրակէ): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Խաղ Մ. Վրդ. Ճունտուրեան:

Կէսօրէ ետք, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 13 Մայիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կիրակի, 14 Մայիս.- Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»-ի արարողութեանը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին վրայ, որուն վերելը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց Տ. Ներսէս Աբղ. Աղոյեան:

Շաբաթ, 20 Մայիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 21 Մայիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Չորեքշաբթի, 24 Մայիս.- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր Բարձրացան Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ կատարուեցաւ «Պղծեալ տաճարի» արարողութիւն, ապա Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեցե՛ք»-ի եւ Հսկման կարգերը եւ ապա Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Հինգշաբթի, 25 Մայիս.- Համբարձումն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտուն Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարւեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիւնն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի վեր-

ջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց պատարագիչ Հայր Սուրբը:

Շաբաթ, 27 Մայիս.- Պատարագը մատուցւեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 28 Մայիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Շաբաթ, 3 Յունիս.- Պատարագը մատուցւեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կէսօրէ ետք, Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Գիշերասկզբին Մայր տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»-ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 4 Յունիս.- Հոգեգալստ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ «Անդաստան» ի Ս. Յակոբ: Ապա Միաբանութիւնը Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Փրկիչ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեց մատուէն ներս, ուր եւ մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան, որ Պատարագի ընթացքին կարգաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը: Պատարագի վերջաւորութեան նախագահութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Կէսօրէ ետք, Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի գլխաւորութեամբ միաբան հայրեր մեկնեցան Սիոն լեռ, այցելեցին վերջին ընթերցան վերնատուն: Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն:

Շաբաթ, 10 Յունիս.- Ս. Պատարագը մատուց-
ւեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորին Ծ.
Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 11 Յունիս.- Ս. Պատարագը մատուց-
ւեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ:
Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէ-
րեան: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Հրեշտա-
կապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Դարի-
պեան:

Երկուշաբթի, 12 Յունիս.- Սրբոց Կուսանացն
Հովհաննէանց: Գիշերային ժամերգութիւնը պաշտ-
ւեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը
մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հովհ-
աննի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վազգէն
Աբղ. Ալէքեան:

Ուրբաթ, 16 Յունիս.- Նախատօնակին ի Ս.
Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան
Արք. Դարիպեան:

Շաբաթ, 17 Յունիս.- Սրբոյ Հօրն մերոյ Գրի-
գորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի Վի-
րապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր
տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի
Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Արտէն Քչնյ
Աբրահամեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս.
Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան
Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրա-
դիր: Նախատօնակէն ետք կատարուեցաւ Կիսա-
սարկաւազական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Լուսա-
րարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 18 Յունիս.- Տօն Կաթողիկէ եկեղեց-
ւոյ Սուրբ էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուե-
ցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամա-
րարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:
Յրնթաց Ս. Պատարագի կատարուեցաւ Սարկա-
ւազական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Լուսարարա-
պետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեանի, որ նաեւ նա-
խագահեց «Հայր Մեր»-էն առաջ կատարուած
«Հայրապետական մաղթանք»-ին:

Շաբաթ, 24 Յունիս.- Սրբոցն՝ Մեծին Ներսիսի
Հայրապետին մերոյ եւ իսադայ Եպիսկոպոսին:
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժա-
մարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Զոհնտուրեան:

Կիրակի, 25 Յունիս.- Գ. Կիրակի զկնի Հոգե-
գալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յա-
րութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն

էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն
էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Ուրբաթ, 30 Յունիս.- Նախատօնակին ի Ս.
Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան
Արք. Դարիպեան:

Շաբաթ, 1 Յուլիս.- Գիւտ նշխարաց Սրբոյ
Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Ս. Մակարի Մատրան
մէջ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կիրակի, 2 Յուլիս.- Գ. Կիրակի զկնի Հոգե-
գալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր
երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ:
Ժամարարն էր Տ. Ներսէճ Աբղ. Ալոյեան:

Չորեքշաբթի, 5 Յուլիս.- Նախատօնակին ի
Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարա-
պետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Հինգշաբթի, 6 Յուլիս.- Սրբոց Թարգմանչաց
Վարդապետացն մերոց՝ Սահակայ եւ Մեսրոպայ:
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապե-
տաց: Պատարագեց Կիւպէնկեան Մատենադարա-
նի Տեսուչ՝ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 8 Յուլիս.- Սրբոցն՝ Տրդատայ Թա-
գաւորին մերոյ եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովի-
դիստոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշ-
տակապետաց: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ.
Հազարեան:

Նոյն օրը, կէսօրէ ետք նախատօնակին ի
Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարա-
պետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Կիրակի, 9 Յուլիս.- Ե. Կիրակի զկնի Հոգե-
գալստեան: Գիւտ Տիոյ Ս. Աստուածածնի: Առա-
ւօտեան Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ
միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան
դէպի Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճար,
ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Ս. Պա-
տարագը մատուց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասար-
եան:

Ուրբաթ, 14 Յուլիս.- Նախատօնակին ի
Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք.
Դարիպեան:

Շաբաթ, 15 Յուլիս.- Սրբոց Երկոտասան Առա-
քելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ Երեքտասաներորդ
Առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի
Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կորին Ծ.
Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 16 Յուլիս.- Զ. Կիրակի զկնի Հոգե-

գալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Ուրբաթ, 21 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 22 Յուլիս. Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Երեկոյեան, Վարդավառի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» եւ «Հսկման» արարողութիւնները: Հանդիսապետն էր Լուսարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 23 Յուլիս. Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան կատարուեցաւ օրուան «Անդաստան»-ը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին Վրայ: Պա-

տարագեց եւ քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Տ. Վազգէն Արք. Միրզախանեան:

Երկուշաբթի, 24 Յուլիս. Յիշատակ մեռելոց:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 28 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 29 Յուլիս. Սրբոցն Թաղէոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 30 Յուլիս. Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Առաւօտեան միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Պատրաստեց՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՐԿ. ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ

